ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48 . Հեռ. 060517670, էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
05 ԱՊՐԻԼԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 113

«ԱԼՎԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ» ԱՁ-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 53-Ն որոշման պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով «Ալվարդ Պետրոսյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1.«Ալվարդ Պետրոսյան» ԱՁ-ին տրամադրել ոգելից խմիչքների և օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն 2021 թվականի 2-րդ եռամսյակի համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

20 21 թ.ապրիլի 05
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670, էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
07 ԱՊՐԻԼԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 114

ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 17-րդ հոդվածի պահանջներով՝ **որոշում եմ**

2021 թվականի ապրիլի 12-ին ժամը 17:00-ին հրավիրել Վերին Պտղնի համայնքի ավագանու արտահերթ նիստ հետևյալ օրակարգով

1. Վերին Պտղնի համայնքի 2021 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումն ի գիտություն ընդունելու մասին:
2. Վերին Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 61-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
3. Վերին Պտղնի համայնքի ավագանու 2021թվականի մարտի 12-ի թիվ 14-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
4. Վերին Պտղնի համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 29-ի թիվ 5-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին
5. Վերին Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 63-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2021 թ.ապրիլի 07
գ.Վերին Պտղնի